

յանկարծական սրտաբուխ խօսքերով՝ յետ նկալազգրելու հանդէսին բնդթը, յիշեց թէ «մեր մանկութեան օրերուն երբ կը սորվէինք պատմութիւնը և մեր ուսուցիչները Միխիթրեան չարագործ Վարդանանց պատերազմի դուռագին մէջ կը բացատրէին մեզ անոնց ի գլուխ տարած բարոյական յաղթութիւնը, մինչ չէինք հասկնար թէ ինչ կը նշանակէ այդ. բայց երբ այսօր կը դիտենք թուրք բիրտ ուղին տապալիլը և մեր ազգին արեան հեղեղին վերածնող ոյժը, կը կրկնենք թէ բարոյապէս յաղթեցինք մենք: Միխիթրեանց հրատարակութիւններէն և Հ. Ղ. Ալիշանի գրութիւններէն ուսանք իւրօք թէ ի՞նչ է այսբնասիրութիւնը, այս առաքինութիւնը որ մեր սյուեղը կը խանդավառէ...»։ յիշեց մեր Ազգ. Պատմութեան նախագահ Պօղոս Նուպար փայայի ազգօգուտ անձնաւորութիւնը՝ որ մեր Ազգին անկախութեան գործը այնքան եռանդեամբ և խոհականութեամբ կ'առաջնորդէ, յիշեց բոլոր ազգային կամաւորները և բոլոր դիցազները...։

Բուռն ծափահարումներ ծածկեցին այս խօսքերն՝ որ իտալիոյ Հայ ուսանողաց զգացումներն և գաղափարները կը պատկերացնէին...։

Անմիջապէս վերջ՝ յոռնկայտ երգուեցաւ Բաւլիորոսան, հայ ազգին խրոխտանքի և քմբոստացումի նուիրական երգը՝ հայ հրաբուր սրբուհի...։ Մեր ազատութեան քայլերը զոր Ս. Ղազարու կղզիակին մէջ՝ անոր անմահ հեղինակն Ալիշան գաղափարեց և ուր առաջին անգամ թնդաց արձագանգելու համար բոլոր հայ երիտասարդները մէջ։ Մինչ սրտեղը դեռ կը տրոփէին այս երգին զգլխիչ աւիւնին տակ՝ կը կանգնի բժշկութեան ուսանող Պր. Հայկազն Արփար, հետեանալ եռանդուն տողերն արտասանելու...

Մեր պատմութեան մէջ, ոսկի տառերով գրուելիք բազմաթիւ դէպքերու չարգիւծ վրայ, կ'աւելայ նաև, 1915-19 թուականներուն մէջ մեր ազգի հոգեւոր եղբայրական արտաքին իրադարձութիւնը, որոնք մեր յարմարութեան պատրաստեցին...

Արարայրի դիպաշնորհ երկնային խրախոյսը ընդ միջէ որ ոգևորեց ներկայ հերոսները՝ փշրելու ցմբոստիւրիւնը գերութեան ժանգոտած շղթաները, կտուրով դարձաւ թնամուլի գէժ, ազատելով միաշնամայն հայուն կաշնադուռած կեանք և նուիրական կրօնը։

Ներկայիս դիւրաւ թուրքը՝ պատրաստեց հայուն գերեզմանը, կազմեց հազարներ կոյտերու, անմեղներու գիւղերով՝ վիթխարի բլուր մը, որուն վրայ ուղեց մէկ անգամ միայն, այս՝ մէկ անգաման համար միայն, իւր գաղը անոր վրայ գնել, նա բազմիւ յալոթաւ գոռոց յաղթական ձեւով և արձակեց ապագայեական քրքիւ մը, իւր հիւսադային նպատակին վերջապէս հասած ըլլալուն։

Բայց կարծես Վարդանի մէկ նայուածքն եղաւ որ ընդգծել տալով մի արի կամաւորներուն՝ ազատեց և պիտի ազատէ մնացած հայութիւնը գերութենէն։

Հետեւ, հետեւ, հա՛ն կը տեսնեմ փայփայեանք աշխարհ մը որ ալքերս կը շլացնէ և կը դիմէ, այդ

մը որ սովորականէն աւելի լուսաւոր և աւելի փնտաւան է. սա կարմիր Վարդանն է, չընպատուած հրկնային լուսազնշողներով, խաչաձեւ սուրն ինքնին, կ'իջնայ մայր Հայաստանի հողի վրայ և յանձնելով հրաշէկ սուրբ փաշ Աղբաբեկին և նորա դիպաշնորհ խմբին՝ Հայոց բանակին կը ներշնչէ, երկնային արքա՝ Բաթը շանթերը տեղացնելու մեր գահինէն դիմել, գլորելով դիրենք իրենց մեղք համար պատրաստած գերեզմանին մէջ։

Նա յաղթական կերպով կը նշնցնէ ոսկեմայն փողը, հրախրելով ներկայ սերունդին կորիւնները, ինչ սրբային տակ, կտուրու համար. մեր դիպաշնորհ նախնային հիման, պաշտպանելու կրօնը և մեզ տրուելիք ազատութիւնը։ Ու ես այս պահուն կարծես կը լսեմ ձայնը Ալիշանի Արարայրի գաղտնի վրայ ոլորուն...

« Կանչէ՛ պլուրիկ, կանչէ՛ անգեան, Որ յերկնաց ի վայր հայի և Վարդան, Յիշէ՛ զՀայաստան տուն իւր սիրական, Հայաստան յիշէ՛ դիւր կարմիր Վարդան »։

Կանչէ՛ անգեան, կանչէ՛ պլուրիկ, Բռնութեան հովէն մեր ցրուած որդիք. Յիշէ՛ զՀայաստան տուն և Հայրենիք, Հայաստան յիշէ՛ դիւր փայն Աղբաբեկ։

Բուռն ծափահարութիւններուն կը յաջորդէ վաճառականութեան ուսանող Պր. Միրան Դէլիքեան՝ որ հիշուն կ'արտասանէ հետեանալ սըր տեղանդն խօսքերը...

Մի՞թէ Միխիթրայ անմահաւունը ողով դեղուն այս միջնորդին մէջ՝ հայութեան ձայնորդ բեկորներս հոս խմբուած ենք տունելու ազգային պատմութեան ամենէն աւելի դիպաշնորհ գրուածը, Վարդանանց պատեալ բազմ...։

Ո՛ր հայուն սիրտը չի տրոփէր, չի բաբախէր՝ երբ իր մտածութիւնն ուղղէ պահ մը դէպի քոսոբաների Արարատեան գալաւ՝ ուր հազարեակներ ինկան մեռած, բայց իրենց արեւուն և սրբազան աւիւններէն յարութիւն անաւ Նոր Հայաստանի հերոսներուն Արարատեան Հանրապետութիւնը։

Մեզմէ ո՞վ կայ որ իր տոմին անանց մէջ չունենայ մարտիրոս մը, չի նշանակէ հերոս մը... պէտք է խրոխտապան ըլլանք, մեր ընտանեաց թոխն մէջ այդպիսի ջաշխանգուղի և անհրկիւղ դիպաշնորհ ունենալու համար...

Այսօր յիշատակը կը կատարենք խճապական պատեալ բազմին մէջ ինկող հայ կամաւորներուն, թուրքին վայրագ սուրին տակ մենեղ մեր նոր նախնայիններուն, ամբթթած կուսաններուն, և անմեղ մանկիկներուն...։ Ասոնց սրբազան աւիւններով ծածկուեցաւ մեր հայրենիքը, ստանց վարդազունեան արեւին ներկեց մեր գալտեղը, որոնք պիտի թուայնեն անթաւան ծաղկներ, բոլորելու Նոր Հայաստանի անմահ հակառու։

Կուեց անենք ուրեմն այս անհամար մարտիրոսներուն պաշտելի շիրմներուն առջև. օրենքն անոնց սուրբ

անխնայեք. թող մեր բերաններն յաւերժացնեն անոնց անուշը, որ մեռան զմեզ վերակենդանացնելու համար:

Մենք հոս ուխտի եկեր ենք, հայութեան պաշտօնի ուխտագրան Ս. Ղազարու կողմակի մէջ, որուն որդիներէն մեծին Ալիշանի հայրենաշունչ քերթածներէն խանդավառուած՝ մեր հայ ղեկուորները գիմեցին քաշաբար գլխի արիւն, կրակ, անմահ փառքը և Հայաստանի անկախութիւնը... Նշխարազորները իրենց անմահ խիզախութիւնները, անունները և յիշատակը:

Ուզեմք նաև մեր սրտագին ուզերմները Մեծին Սրբիթարայ և իր Միաբանութեան անդին իր իր կողմակիներուն՝ Հ. Սահպանի, Հ. Կարապետի, Հ. Պողոսի և Հ. Թովմասի, լուսապսակ չորս նահատակներուն, որոնք թուրքի սուրին տակ իրենց աստուածաժուէր կենացը զոհեցին՝ հաւատարմի մնալով իրենց ուխտին՝ ցմերթին կաթիլ արեան, և գնացին վայելել երկնաւոր անվառած պսակները... Անմահութիւն իրենց հողային...:

Ուզեմք նաև մեր սրտագին և սիրալիս ուզերմները և մաղթանքները՝ մեր վերանշող Հայրենիքին. ողջունեմք իր փառաւոր անկախութեան արշալոյսը, կարմրազորը ազգերու վերածնութեան պատմութեան մէջ... Եւ խոնարհինք անհաճաբար՝ իր հաւատը, արիւնթիւնը և մարտիրոսութիւնը խորհրդանշող հուազունաններուն առջև, գոչելով լի սրտով և հոգեով՝

Կեցցէ՛ Մեծն Միթար և իւր Որդիքը,
Կեցցեն յաւե՛ հայ ազգին Վարիշները
Կեցցեն՝ հայ հերոս կամաւորները,
Կեցցէ՛ Ազատ Անկախ Հայաստանը

Հազիւ թէ աւարտած էր ճառախօսը՝ համալսարանական ուսանողը սկսան երգել ամէն հայու սիրելի Միւր Հայրենիքը և Դաշնակցական խռովը, բայց ներկաներուն խանդավառութիւնը կ'առաւելուէր՝ բժշկութեան ուսանող Մանուկ Խան, պէկանի արծակ ռոտանաւորով՝ ուր կը լսուէր հայ մուսային գողտրիկ փնարը.

ԴԱՐՁ ՇԻՐԻՄԵՆ

Կը բարձրանայի կողքէն Մասիսի
Դիտելու վսեմ աշխարհն Հայոց.
Բարձր էր զազաթը Միծին ձկնազարդ.
Եւ կը զզայի թէ քիչերուն
Ի՞ արժանի ողջունել զայն:
Նստած էի ժպտի մը մօտ
Բնութեան ուսմ ձեռնու.
Էս լզիտեմ ոսկի՜ց յանկարծ
Միւրենի մը ինձ երեցաւ,
Ապիտակ էր ձիւնի նման.
Եւ կարեհին թէ Մասիսի որդին լինէր
Ու աչնպէս զինքն ողջունեցի:

Նոյս աչքերէն
Կայծակներ գուրս կը ժայթքէին
Եւ ըրթներէն բոցեր անդի:

Ձեռքն ուխտ գրաւ և հանգարտ
Պատմեմ - բաւա - քեզ յիշատակն այս ատուր.
Տուր ինձ հողդ և այնդ.
Իս կու տանիմ քեզ կին զարերն հայրունի:

Դիտէ որդեակ. գու կը տեսնե՞ս
Մշուշին մէջ թափանցիկ
Այն զաշտավայրն ուր կը շողայ
Ոսկի հղիամե սոսուօտեան:
Դու կը տեսնե՞ս յատկէ ջրերն՝
Ան գետին որ կը սահի կարկաշտն
Մաղիկներու և կանաչին մէջ հեղիկ:
Տղմունտ է այն
Ուր մեր Բրիտանուր ազգին
Երկրորդ անգամ մկրտուեցաւ:

Տես Աւարայրն պատմական
Մեծ պանթէոնն հայրենեաց.
Եւ գրե՛ք թմեր. ձերունին ինձ մասնանշից
Կապոյտ կամարն երկնքին...
Դիտա՛ Աստուած Արարիչ:

Երկրպագի՛ր հազար սրբոց շիրիմին.
Թող հոն կենալք. վերաբոցծուի
Հին կենսերու խորհրդով:
Մամիկոնեան Արիծին
Ահիւններէն սրբազան
Սնոր արեան բոցերէն
Գերատուածեան զօրութիւն
Շինէ յոյսերդ ապագայ:

Տա՛ր աւետիս - բաւա - ձերունն սպիտակ -
Վայ առաւօտանց ծագից նոր արփին,
Գարնանամուտ է այսօր.
Ասա՛ թէ միջինն անցաւ մեր երկրէն,
Սնան մահազոյժ բուերն սխուր
Մահն ալ անցաւ:
Ձայն տուր և երգէ՛
Թե՛ կը փէշ լոճին վապուրականի.
Գարձաւ կըռունկը նորէն
Նախկին քոյնն իր շնչընչելու:
Ասա՛ թող երգէ՛ս յոխակն անուշ,
Հայ կենականին
Թե՛ կանքն հողէն ստեղծէ.
Ու իսնշարածն, սասա՛, զուարթ թող երգէ
Մարգերուն մէջ գոմիւսաթ.
Ձայն տուր թէ այսօր մեր Մարտին ալ
Իր վշտերով զարգարուն
Կուրծքին թող սեղծէ
Որդիքն իր պանդուխտ:
Գնա՛ որդեակ,
Եթէ՛ մե՛ ոմն քեզ հարցնէ՛

Ո՛վ էր ծերունի այն արեւոր.
 Եւ քեզ կ'ասեմ.
 « Սերունդներու նոյնն եմ,
 Կ'ապրեմ յաւերժ Տաճարին մէջ,
 Ու կը հսկեմ մարտիրոսաց շիրիմներուն.
 Մարտմարս Եւ Արարիքի երկունքէն,
 Եւստիս Եւ Հայ Պատմութիւն »
 Մականունս՝ դիպաշնութիւն »:

Խլացողացի ծափերէ վերջ՝ կը լսուին երկու
 ջութակներու սրտագրաւ հնչումները . երկու
 ուսանողներ են՝ Արիս Հիւսէինճեան և Եղուարդ
 Գոնտաթեան՝ որոնք կ'ընկերեն իմ յինարի
 ետքի երգին, որ պահ մը կը գերէ կը տանի
 ամենուն միտքը, երկակայութիւնը դէպի հայրենի
 լեռները, հովիտները, յիշեցնելու հայ կեանքին
 երջանիկ վայրկեանները. երգ մը՝ որ ամենուն
 սրտին վրայ մեղմադաճութեան շղար մը կը
 թողու: Ապա բազմակիւնաց կողմէն հրաւիրուե-
 ցաւ Հ. Սահակ Վ. Տէր Մովսէսեան մաղթողա-
 կան յորդոր մը խօսելու. համակրելի Հայրը,
 ընդունելով հրաւերը՝ բեղուն խօսքերով բացատրեց
 օրուան Գիւնդակ վարդանայ մեծ դէմքը, բոլորո-
 վին լուսաւոր, ազգային քաջութեան և հասարակ
 տիպար՝ գեղեցիկ համեմատութեամբ վասակայ
 սև և ազգակործան բռնած ընթացքին: Այս
 տպաւորիչ և զուարթ ներշնչման և հայրենասի-
 րական շինջ զգացմանց արտայայտութիւն-
 ները ծանկեցին խլացողի ծափերը, որոնք
 կ'աւետէին Նոր Հայաստանի անկախութիւնը:
 Այս օրուան յիշատակը անջնջելի պիտի մնայ
 զայն տօնողներուն սրտին մէջ:

Ամբոփեց ՄԻՆԱՆ ՇԵՌԿԵԱՆ

Յաջորդ օրուան քաղցիս խաղաղական թերթն-
 րէն մին հետեւեալ նկարագիրը կը բովանդակէր.

Եւրէպիթարեան Հայերը կատարեցին իրենց տօնը.
 Կերկայ էր բազմաթիւ խումբ մը Հայոց վարժարանին
 աւարտաւարժ փառաւայել Համալսարանի ուսանողներէ:
 Եւստիս Եւստիսաւոր պատարագին դր մատուց Հ.
 Հմայեակ Վ., կատարուեցաւ պաշտօն հանգստեան թուրք
 ըստարարութենէն հետեւեալ անհատականներուն համար՝ որոնք
 մէջ յիշատակութեան արժանի են Միջազգայնութեան ան-
 դամ յորս Հայերը:

Հաշարարին մէջ կը փայլէին խաղաղական և հայկա-
 կան գրոշները՝ առաջին անգամ եղբայրական կապով
 իրարու փարձ:

Թօսեցան, շատ մը ծափերու արժանանալով, ուսանող-
 ներու մեծ մաս մը, յորս Տրդ. Արարիքի դասակներէն
 մին, ամէնքն ալ մաղթանքներ ընելով իրենց սիրելի
 Հայրենիքին վէր. Հարք Գիւրգէ, Գաբրիէլ, Խաւակ,
 Ներսէս և այլք եռանդաւորներին պատանները արժա-
 նաւոր որդիներեան շայատանի՝ յիս իրեն համար

այսքան եղեանական վայրկեաններուն: Եւ Սիւրանի քա-
 անայն (հայասեր խաղաղի կրտսերներէն մին) նիւթ
 առնելով երկու գրօններուն միութենէն, մաղթանքներ
 ուղղեց վառվառ խօսքերով ազնուական Հայ ազգին՝ ու-
 բուն մայնիով խաղաղ (Վաղարէ կ'ըստարագ) ըլ իր բո-
 սորագեղ արեան ծովէն, մատանայնց կանաչափայլ բո-
 ցերը արգար յայտ մը իր իրաւունքի պահանջներուն
 մէջ, մինչ ձկնքէն բռնած կ'ընկերէ ազատ Ազգերու
 Համաժողովութեան մէջ բազմելու, վայելիլու համար եր-
 կար և պաշտօն խաղաղութեան մը կապաւորող որքան
 որ դարբեր տեղե իր գերութեան ամպրոպը:

Յորդորեց ապա ներկայ երիտասարդները հանդիմե-
 լու ապագան իրենց Հայրենիքի, ազատութեան շնորհիւ
 իրենց առաքինութեան և դիտութեան, և ի դոյր գնելով
 իրենց խաղաղարարներուն՝ Միթարեան Հայերու
 կրթութեան և օրինակը:

Հատեալ յաջորդեցին հայկական և խաղաղական երգեր
 որոնց կ'ընկերէին ջութակները և այս տարի հանդէսը
 վերջացաւ մեծահոգի ուրախութեան մը զգացմանցներէ,
 որովհետեւ ամէն Հայու սրտին մէջ տողորուած է որ
 Համաժողովութիւնը ազատելով զիրենց արեւմտ լուծէ
 մը, ամենաբար բոլոր աշխարհի, ճանշնայ դիրենց ազատ
 և անկախ իրենց Հայրենիքին մէջ. երախտագէտ այս
 բոլոր բարեբար ազգերուն, ըսցց ոչ մէկուն գերի:

ՄԻՆԱՆ

(Թարգմ. Չարեան Հ. Գ.)

ԿՈՐՈՒՄԵԱԼ ԷՐ ԵՒ ԳՏԱԻ

(«ՌԱԶՄԱՐԱԶԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐ»)

Յ Յ

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ զեփուռ հեգ

Աշխարհիս դուռն է եկիր,
 Հեծեծանքով մ'աղեկեց

Կ'ըտէ. «Ո՛վ հայր որդեսէր,
 Ես չարաչար մեղայ քեզ.

Տալով կըսկիծ խըստամբեր՝
 Օտարացայ իմ հողէս...

Մեղքս անառակ մի՛ յիշեր »:

Եւ դուռն, ով հայր՝ Դաշնակից
 Պետտրիշենքի Համաճայն,
 Համբուրելով խընդալից, —

« Չար յուշիկներդ ալ անցան,
 Կ'ըսես, եկուր ան հանդերձ... »

Յարեան, տղան մահամբերձ:

1 Նոյեմբ. 1918,

Հ. ԳՐՍ. ԱՅՏԵՆԱՆ